

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Արդարադատության ակադեմիայի մասին օրենսդրությունը

1. Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) գործունեությունը կարգավորվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն օրենքով նախատեսված ուսուցման ծրագրեր իրականացնելիս «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները Ակադեմիայի վրա չեն տարածվում:

ԳԼՈՒԽ 2. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հոդված 2. Ակադեմիայի իրավական կարգավիճակը և նպատակները

1. Ակադեմիան պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

2. Ակադեմիայի հիմնադիր փաստաթուղթը Ակադեմիայի կանոնադրությունն է (այսուհետ՝ Կանոնադրություն), որն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը (այսուհետ՝ արդարադատության նախարար) Ակադեմիայի կառավարման խորհրդից՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան ստացած Կանոնադրությունը կամ դրանում առաջարկված փոփոխությունները, ստանալու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն (այսուհետ՝ կառավարություն):

3. Հիմնադրի անունից հանդես եկող պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն է (այսուհետ՝ արդարադատության նախարարություն):

4. Ակադեմիայի գործունեության նպատակներն են՝

1) դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մոտ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը.

2) դատավորների, դատախազների, դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված Ակադեմիայի շրջանավարտ անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների, դատական կարգադրիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը.

3) դատավորների, դատախազների, դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կրթական ծրագրերի աստիճանական մերձեցումը, համատեղ կրթական ծրագրերի իրականացումը:

Հոդված 3. Ակադեմիայի գործառույթները

1. Ակադեմիան՝

1) կազմակերպում և անցկացնում է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը.

2) կազմակերպում և անցկացնում է դատավորների, դատախազների, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստումը.

3) կազմակերպում և անցկացնում է դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստումը.

4) կազմակերպում է դատավորների, դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցումը՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններին ուսուցանելու նպատակով.

5) իր իրավասության սահմաններում կնքում է պայմանագրեր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ, համագործակցում օտարերկրյա կազմակերպությունների հետ, անդամակցում միջազգային կառույցներին.

6) սույն օրենքով նախատեսված կրթական ծրագրերի իրականացման համար մշակում է ուսումնամեթոդական նյութեր.

7) իր գործունեության նպատակներին համապատասխան կարող է իրականացնել Կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներ:

ԳԼՈՒԽ 3. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հողված 4. Ակադեմիայի կառավարման և ղեկավարման մարմինները

1. Ակադեմիայի կառավարումն իրականացնում է Ակադեմիայի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)՝ սույն օրենքով նախատեսված կարգով:

2. Ակադեմիայի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ Ակադեմիայի ռեկտորը (այսուհետ՝ Ռեկտոր):

Հողված 5. Խորհրդի կազմավորման կարգը

1. Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից, որի կազմի մեջ են մտնում.

1) արդարադատության նախարարը կամ նրա նշանակմամբ՝ իր տեղակալը.

2) երեք դատախազ, որոնք նշանակվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի (այսուհետ՝ գլխավոր դատախազ) կողմից.

3) երեք դատավոր, որոնք նշանակվում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացմամբ դատավորների ներկայացվածությամբ:

2. Խորհրդի անդամները, բացառությամբ սույն հոդվածի 1-ի մասի 1)-ին կետով նախատեսված անդամների, նշանակվում են չորս տարի ժամկետով: Եթե Խորհրդի համապատասխան անդամի լիազորությունները դադարել են սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքով, ապա նոր անդամը նշանակվում է նախկին անդամի լիազորությունների ժամկետի ավարտին մնացած ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2)-րդ և 3)-րդ կետերով նախատեսված Խորհրդի անդամները չեն կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Խորհրդի անդամ:

4. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կազմից՝ նրա անդամների ձայների մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ, դատախազ և դատավոր անդամների միջև ռոտացիոն կարգով: Սույն հոդվածի 1-ի մասի 1)-ին կետով նախատեսված Խորհրդի անդամը չի կարող ընտրվել Խորհրդի նախագահ:

5. Խորհրդի նախագահն ընտրվում է մեկ տարի ժամկետով, իսկ եթե նրա՝ որպես Խորհրդի անդամի լիազորությունների ժամկետի ավարտմանը մնացել է մեկ տարուց պակաս, ապա՝ այդ ժամկետով:

6. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

7. Խորհրդի դատավոր կամ դատախազ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

1) իր հիմնական պաշտոնում լիազորությունները դադարելու և նույն համակարգում սույն հոդվածի 1-ին մասի համապատասխանաբար 1)-ին և 2)-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխանող պաշտոնի չնշանակվելու դեպքում.

2) իր գրավոր դիմումի համաձայն՝ այդ մասին տեղեկացնելով Խորհրդին, ինչպես նաև իրեն նշանակող մարմնին կամ պաշտոնատար անձին.

8. Խորհրդի դատավոր անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են նաև, եթե մեկ այլ դատարանում դատավորի պաշտոնի նշանակվելու արդյունքում խախտվում է սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված մասնագիտացումներով դատավորների ներկայացվածության համամասնությունը:

9. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված Խորհրդի անդամ արդարադատության նախարարի տեղակալի՝ որպես Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել նախարարի կողմից՝ ցանկացած ժամանակ:

Հոդված 6. Խորհրդի լիազորությունները

1. Խորհուրդը՝

1) իրականացնում է Ակադեմիայի կառավարումը.

2) մշակում և արդարադատության նախարարի միջոցով կառավարություն է ներկայացնում Ակադեմիայի կանոնադրությունը կամ դրանում առաջարկվող փոփոխությունները.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանները, հրահանգները և ցուցումները.

4) լսում է Ակադեմիայի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է Ակադեմիայի գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում Ակադեմիային ամրացված պետական սեփականության, ինչպես նաև Ակադեմիայի սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան համաձայնություն է տալիս Ռեկտորի կողմից Ակադեմիայի գույքի օտարման, ձեռքբերման կամ օգտագործման հանձնման հետ կապված խոշոր գործարքներ կատարելու համար.

6) Ռեկտորի նկատմամբ կիրառում է խրախուսանքի միջոցներ և սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով կարգապահական տույժեր, ինչպես նաև սահմանում է ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը, ծառայողական քննություն անցկացնելու համար ձևավորում համապատասխան հանձնաժողով.

7) Ռեկտորի ներկայացմամբ հաստատում է Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները, հաստիքացուցակը ու աշխատողների պաշտոնային դրույքաչափերը,

8) Ռեկտորի ներկայացմամբ՝ հաստատում է Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը).

9) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով կառավարություն է ներկայացնում առաջարկություններ Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշիվի (բյուջետային հայտի) վերաբերյալ.

10) հաստատում է սույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված անկախ աուդիտ իրականացնող անձին.

11) հաստատում է իր աշխատակարգը և նիստերի ժամանակացույցը.

12) Ռեկտորի ներկայացմամբ՝ հաստատում է Ակադեմիայի կրթական չափորոշիչները, ուսուցման ծրագրերը, դրանց իրականացման կարգերը և ժամանակացույցերը.

13) Ռեկտորի ներկայացմամբ՝ հաստատում է ունկնդիրների մասնագիտական պատրաստման ընթացքում փորձաշրջանի անցկացման կարգը և ունկնդրի փորձաշրջանի գնահատման չափանիշները, փորձաշրջանի բովանդակության նվազագույն պահանջները, փորձաշրջանի արդյունքում ներկայացվող հաշվետվության և գրավոր գնահատագրի ձևերը.

14) Ռեկտորի ներկայացմամբ՝ հաստատում է Ակադեմիայում քննությունների անցկացման կարգն ու պայմանները, ունկնդրի գիտելիքների գնահատման և քննական միավորների հաշվարկման կարգը, քննությունների անցկացման ժամանակացույցը, գիտելիքների ստուգման եղանակների, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, քննության արդյունքների բողոքարկման կարգը.

15) սահմանում է գնահատման հանձնաժողովի անդամների վարձատրության կարգն ու պայմանները.

16) Ռեկտորի ներկայացմամբ քննարկում և լուծում է ունկնդիրների նկատմամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժեր կիրառելու հարցը,

17) սույն օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակից ունկնդրին հանելու միջնորդությամբ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ (այսուհետ՝ Արդարադատության խորհուրդ) կամ գլխավոր դատախազին դիմելու վերաբերյալ.

18) Ռեկտորի ներկայացմամբ քննարկում և լուծում է ունկնդրին տարկետում տրամադրելու հարցը.

19) Ռեկտորի ներկայացմամբ սահմանում է վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման խմբերում ընդգրկվող ունկնդիրների առավելագույն թվաքանակը.

20) իրականացնում է սույն օրենքով և Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2. Խորհուրդը ձեռնարկում է Ակադեմիայի գործունեության ստուգմանն ուղղված միջոցառումներ՝ Խորհրդի առնվազն երկու անդամի կամ արդարադատության նախարարի պահանջով՝ դրանում նշված հիմքերի սահմաններում: Ստուգմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ պահանջը տարվա ընթացքում մեկ անգամ ենթակա է պարտադիր բավարարման Խորհրդի կողմից, որից հետո նույն անդամի կողմից նմանատիպ պահանջ կրկին ներկայացվելու դեպքում Խորհուրդը որոշում է կայացնում պահանջի բավարարման կամ մերժման վերաբերյալ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ստուգումներն իրականացնելու նպատակով Խորհուրդը իր կազմից ձևավորում է համապատասխան խումբ, որի մեջ չեն

մտնում ստուգման վերաբերյալ պահանջով հանդես եկած անդամները: Ստուգումներն իրականացելու նպատակով հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջվելու պարագայում Խորհուրդը իր որոշմամբ կարող է ներգրավել համապատասխան մասնագետ կամ մասնագիտացված կազմակերպություն: Այս դեպքում ստուգումների իրականացումը ֆինանսավորվում է Ակադեմիային պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների հաշվին:

Հոդված 7. Խորհրդի նախագահը

1. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

2) հրավիրում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

3) իրականացնում է սույն օրենքով և Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2. Խորհրդի նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում Խորհրդի նիստը բացում է տարիքով ավագ Խորհրդի անդամը, որից հետո Խորհրդի նախագահի լիազորություններն ժամանակավորապես իրականացնում է Խորհրդի անդամներից մեկը՝ Խորհրդի որոշմամբ:

Հոդված 8. Խորհրդի նիստերը և որոշումներ կայացնելու կարգը

1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն չորս անգամ:

2. Խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, ինչպես նաև արդարադատության նախարարի, գլխավոր դատախազի, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի (այսուհետ՝ դատարանների նախագահների խորհուրդ), Խորհրդի առնվազն երեք անդամների կամ Ռեկտորի պահանջով: Արդարադատության նախարարը կարող է արտահերթ նիստեր հրավիրելու նախաձեռնությամբ հանդես գալ միայն սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-11-րդ կետերով նախատեսված հարցեր քննարկելու համար:

3. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի առնվազն 4 անդամ, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ առնվազն երեք անդամ:

4. Խորհուրդը սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-19-րդ կետերով նախատեսված հարցերը քննարկում և դրանց մասին որոշում է կայացնում հետևյալ կազմերով՝

1) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց, դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերաբերյալ՝ միայն

դատավոր և սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անդամներով,

2) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների, դատական կարգադրիչների վերաբերյալ՝ միայն դատախազ և սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անդամներով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետով նախատեսված կազմերով հարցեր քննարկելիս խորհրդի՝ համապատասխանաբար դատախազ կամ դատավոր անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են նիստին:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցերի քննարկման ժամանակ խորհրդի նիստը նախագահում է խորհրդի նախագահը, եթե նա հանդիսանում է նաև խորհրդի համապատասխան կազմի անդամ: Հակառակ դեպքում, խորհրդի տվյալ կազմի անդամները ձայների մեծամասնությամբ իրենց կազմից սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետով ընտրում են խորհրդի նիստը նախագահող:

7. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, գլխավոր դատախազը, արդարադատության նախարարը և Ռեկտորն իրավունք ունեն խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու խորհրդի նիստերին: Խորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել խորհրդի որոշմամբ իրավիքոված այլ անձինք:

8. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմերով գործելիս առնվազն 3 ձայնով՝ կողմ կամ դեմ քվեարկելով:

9. Խորհրդի նախագահը, իսկ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում՝ նիստը նախագահողը իր նախաձեռնությամբ և (կամ) ստացված առաջարկությունների հիման վրա սահմանում է խորհրդի նիստերի օրակարգերը:

10. Խորհրդի արձանագրություններն ու որոշումները ստորագրում են խորհրդի նախագահը, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ նիստը նախագահողը և նիստին մասնակցող անդամները:

11. Ռեկտորը խորհրդի նիստերի օրակարգի և ժամի մասին գրավոր տեղեկացնում է խորհրդի անդամներին՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

12. Խորհրդի աշխատանքների տեխնիկական սպասարկումը և գործավարությունը կազմակերպում է Ռեկտորը:

Հոդված 9. Ակադեմիայի գործադիր մարմինը

1. Ակադեմիայի Ռեկտորի պաշտոնը կարող է զբաղեցնել իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող, հայերենին տիրապետող Հայաստանի

Հանրապետության քաղաքացի, ով ունի իրավունքի բնագավառում առնվազն 10 տարվա աշխատանքային և մանկավարժական գործունեության առնվազն 2 տարվա ստաժ:

2. Ռեկտորն ընտրվում է Խորհրդի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ գաղտնի քվեարկությամբ, Խորհրդի անդամների առնվազն հինգ ձայնով ընդունված որոշմամբ:

3. Եթե Խորհուրդը, Ռեկտորի պաշտոնի համար թեկնածուների հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում, ներկայացված հայտերի թվից չի ընտրում Ռեկտոր, ապա Ռեկտորին է նշանակում Հայաստանի Հանրապետության վարչապետը (այսուհետ՝ վարչապետ)՝ հայտ ներկայացրած թեկնածուների թվից:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում վարչապետը Խորհրդի առաջարկած թեկնածուների թվից երկշաբաթյա ժամկետում չի նշանակում Ռեկտոր, ապա Խորհուրդը հայտարարում է նոր մրցույթ:

5. Ռեկտորի լիազորությունների ժամկետը հինգ տարի է: Միևնույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Ռեկտորի պաշտոնում:

6. Խորհուրդը, Ռեկտորի լիազորությունների ավարտից առնվազն 40 օր առաջ, առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, հրապարակում է Ռեկտորի պաշտոնի համար մրցույթին մասնակցելու դիմումների ընդունման ժամկետը, վայրը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

7. Ռեկտորի պաշտոնի համար մրցույթին մասնակցելու հայտերի ընդունման ժամկետը ոչ պակաս, քան մեկ շաբաթ և ոչ ավելի քան մեկ ամիս է:

8. Ռեկտորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում, Ռեկտորի պաշտոնի համար մրցույթը հայտարարվում է պաշտոնը թափուր մնալու օրվան հաջորդող մեկշաբաթյա ժամկետում:

9. Ռեկտորի կողմից իր լիազորությունների կատարման ժամանակավոր անհնարինության դեպքում նրան ժամանակավորապես փոխարինում է Ակադեմիայի կանոնադրությամբ Ռեկտորին փոխարինելու իրավասություն ունեցող անձը:

10. Ռեկտորի լիազորությունների դադարեցման, պաշտոնը թափուր մնալու կամ սույն օրենքով սահմանված կարգով Ռեկտորի լիազորությունների կասեցման դեպքում այդ լիազորությունները ժամանակավորապես իրականացնում է Ակադեմիայի կանոնադրությամբ Ռեկտորին փոխարինելու իրավասություն ունեցող անձը:

11. Ռեկտորը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Հոդված 10. Ռեկտորի լիազորությունները

1. Ռեկտորը՝

- 1) առանց լիազորագրի հանդես է գալիս Ակադեմիայի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.
- 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Խորհրդի որոշումներով և Կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Ակադեմիայի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
- 3) տալիս է Ակադեմիայի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
- 4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Ակադեմիայի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- 5) համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրեր է կնքում Ակադեմիայում դասավանդման գործընթացին ներգրավված անձանց հետ.
- 6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
- 7) օրենքով և Կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ եւ վերահսկում դրանց կատարումը.
- 8) կազմակերպում է Ակադեմիայում ուսումնական գործընթացը.
- 9) կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը.
- 10) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները, ինչպես նաև հաստիքացուցակը ու աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.
- 11) հրապարակում է Ակադեմիայի գործունեության տարեկան հաշվետվությունը.
- 12) կազմակերպում է քննական հարցերի կազմումը և ապահովում է դրանց գաղտնիության պահպանումը.
- 13) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը).
- 14) Ակադեմիայում ուսումնառության ընթացքում դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի կողմից համապատասխանաբար դատավորի կամ դատախազի վարքագծի կանոնների ենթադրյալ խախտում պարունակող արարքների վերաբերյալ տեղեկությունների տիրապետելու դեպքում այդ մասին հայտնում է համապատասխանաբար Ղատարանների նախագահների խորհրդի էթիկայի հարցերով հանձնաժողովին կամ գլխավոր դատախազին.
- 15) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 11. Ռեկտորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Իր պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանազանցման,

այդ թվում՝ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված քննական հարցերի գաղտնիությունը չպահպանելու, ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքերում, Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով, Ռեկտորի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

- 1) նախազգուշացում.
- 2) նկատողություն.
- 3) խիստ նկատողություն.
- 4) զբաղեցրած պաշտոնից ազատում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժը կիրառում է Խորհուրդը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կարող է կիրառել Խորհուրդը՝ վարչապետի համաձայնությամբ կամ վարչապետը՝ Խորհրդի համաձայնությամբ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու նախաձեռնությամբ հանդես եկող մարմնի որոշումը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված համաձայնությունը տալու նպատակով համապատասխանաբար վարչապետը կամ Խորհուրդը իրավունք ունեն կանչել և լսել Ռեկտորին:

6. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված Ռեկտորի հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը: Կարգապահական տույժ չի կարող նշանակվել, եթե կարգապահական խախտումը կատարելու օրվանից անցել է երկու տարի:

7. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժի ենթարկելու հարցով Խորհուրդը պետք է որոշում կայացնի հարցը Խորհրդի քննարկմանը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում՝ չհաշված Ռեկտորի հիվանդության կամ արձակուրդում գտնվելու պատճառով հարցի քննության անհնարինության ժամանակահատվածը:

8. Եթե սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ներկայացված միջնորդությունը ստանալու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում համապատասխանաբար վարչապետը կամ Խորհուրդը համաձայնություն չեն տալիս սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու մասին, ապա Ռեկտորը համարվում է սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված տույժի ենթարկված: Կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումը ուղարկվում է Ռեկտորին կարգապահական տույժ նշանակելու օրվանից եռօրյա ժամկետում:

9. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

10. Եթե Ռեկտորը կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

11. Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված դեպքերում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննություն նշանակելուց և անցկացնելուց հետո: Այդ նպատակով Խորհուրդը ձևավորում է համապատասխան հանձնաժողով:

12. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տույժի կիրառումից առաջ Խորհուրդը պարտավոր է Ռեկտորին տալ Խորհրդի նիստում բացատրություն ներկայացնելու հնարավորություն:

13. Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում, եթե Ռեկտորի գործունեությունը կարող է խոչընդոտել քննության արդյունավետությանը, Ռեկտորի լիազորությունները Խորհրդի առնվազն 5 անդամի որոշմամբ կարող են կասեցվել մինչև 1 ամիս ժամկետով՝ վարձատրության պահպանմամբ:

ԳԼՈՒԽ 4. ԱՎԱՂԵՄԻԱՅԻ ԳՈՒՅՔԸ

Հոդված 12. Ակադեմիայի գույքն ու ֆինանսավորումը

1. Ակադեմիան ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանձին բյուջետային տողով:

2. Ակադեմիայի սեփականությունը ձևավորվում է Ակադեմիայի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

3. Ակադեմիայի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել նաև՝

- 1) պետական բյուջեից հատկացված միջոցները,
- 2) ձեռնարկատիրական գործունեության արդյունքները.
- 3) դրամաշնորհները, նվիրատվությունները, կտակված գույքը.
- 4) օրենքով չարգելված այլ միջոցները:

4. Հիմնադրի որոշմամբ Ակադեմիային անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է գործունեության համար անհրաժեշտ գույք:

5. Ակադեմիան ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է հաշիվներ բացել բանկերում (այդ թվում՝ նաև օտարերկրյա) ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով: Բանկային հաշիվների գումարներին ավելացած տոկոսները եւ արտոնությունները պատկանում են Ակադեմիային:

6. Ակադեմիայի բոլոր եկամուտներն ու ծախսերը նախատեսվում եւ օգտագործվում են տարեկան նախահաշվին համապատասխան:

Հոդված 13. Ակադեմիայի ֆինանսական գործունեության վերստուգումը

Ակադեմիայի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է տարեկան վերստուգման (աուդիտի) անկախ աուդիտ իրականացնող անձի կողմից:

ՉԼՈՒՄ 5. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՆԿՆԴՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հոդված 14. Ակադեմիայի ունկնդիրները

1. Ակադեմիայի ունկնդիրներն (այսուհետ՝ ունկնդիր) են՝
 - 1) դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված կարգով ցուցակում ընդգրկված նախկին դատավորների.
 - 2) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձանց.
 - 3) դատավորները, դատախազները, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձինք, դատական ծառայողները, դատախազության աշխատակազմում պետական ծառայողները և դատական կարգադրիչները:
 2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ունկնդիրներն Ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում ստանում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի վարձատրությանը համապատասխան կրթաթոշակ:
 3. Վերապատրաստման ընթացքում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրները ազատվում են իրենց պաշտոնեական պարտականությունների կատարումից՝ վարձատրության իրավունքի պահպանմամբ:
 4. Վերապատրաստման վայրից դուրս մշտապես բնակվող սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրներին Ակադեմիայի կողմից, պետական բյուջեի միջոցների հաշվին, տրվում է տրանսպորտային, գիշերավարձի և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում կամ կազմակերպվում է նրանց փոխադրումն ու բնակության ապահովումը:

Հոդված 15. Ակադեմիայի շրջանավարտների աշխատանքի կազմակերպումը

1. Ակադեմիայում ուսուցումն ավարտելուց հետո դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք պարտավոր են անցնել իրավաբանի որակավորում պահանջող աշխատանքի Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտում, եթե նրանք ավելի քան չորս ամիս անընդմեջ չեն զբաղվում իրավաբանի մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքով:
 2. Ակադեմիայում ուսուցման ավարտից հետո Ակադեմիայի շրջանավարտ՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք կարող են դիմել

դատախազության աշխատակազմում իրավաբանի որակավորում պահանջող աշխատանքի ընդունվելու համար: Դիմում ներկայացրած անձը օգտվում է դատախազության աշխատակազմում համապատասխան թափուր տեղ առաջանալու դեպքում այդ պաշտոնում առանց մրցույթի նշանակվելու նախապատվությունից:

Հոդված 16. Ունկնդրի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրը կարող է Ռեկտորի ներկայացմամբ Խորհրդի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները խախտելու կամ ուսումնական դասընթացներից անհարգելի պատճառով բացակայելու համար:

2. Կարգապահական տույժերի տեսակներն են՝

1) նախազգուշացում.

2) նկատողություն, որը զուգորդվում է՝ մինչև 3 ամիս ժամկետով կրթաթոշակի 25 տոկոսից զրկելով.

3) խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ մինչև 6 ամիս ժամկետով կրթաթոշակի 25 տոկոսից զրկելով.

4) ունկնդրին դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ համապատասխանաբար Արդարադատության խորհրդին կամ Գլխավոր դատախազին դիմելու մասին՝ սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմաքերի առկայության դեպքում:

3. Ունկնդրին Խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի նկատմամբ տարածվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:

4. Ունկնդրի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, ունկնդրի անձը, առկա կարգապահական տույժերը, ունկնդրին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

5. Խորհուրդը, ունկնդրին կարգապահական տույժի ենթարկելու հարցի քննության արդյունքում, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) կարգապահական տույժ կիրառելու հարցի քննությունը կարճելու մասին.

2) ունկնդրին սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տույժերի ենթարկելու մասին:

6. Խորհուրդը կարճում է ունկնդրին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ հարցի քննությունը այն դեպքում, երբ՝

1) առկա չէ ունկնդրին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.

2) կարգապահական տույժ կիրառելու հարցի քննությունը իրականացվում է սույն օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ, եթե ունկնդիրը համաձայն է հարցի քննության կարճմանը նշված հիմքով.

7. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Խորհուրդը պետք է որոշում կայացնի հարցը Խորհրդի քննարկմանը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում՝ չհաշված ունկնդրի հիվանդության պատճառով հարցի քննության անհնարինության ժամանակահատվածը:

8. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված ունկնդրի հիվանդության պատճառով հարցի քննության անհնարինության ժամանակահատվածը:

9. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել կարգապահական խախտումը կատարելու օրվանից:

10. Կարգապահական տույժի մասին ունկնդրին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելու օրվանից եռօրյա ժամկետում:

11. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

12. Եթե ունկնդիրը կարգապահական տույժ նշանակելու օրվանից վեց ամսվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

13. Եթե ունկնդիրը հաջորդաբար ենթարկվել է կարգապահական տույժերի, որոնք առաջացնում են կրթաթոշակի իջեցում, ապա կրթաթոշակի ընդհանուր իջեցումը յուրաքանչյուր ամիս չի կարող գերազանցել կրթաթոշակի 50 տոկոսը:

14. Ունկնդիրը կարող է սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժը նշանակելու մասին Խորհրդի որոշումը բողոքարկել վարչական դատարան՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում:

Հոդված 17. Ունկնդրին թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությունը և ազատումը Ակադեմիայից

1. Խորհուրդը, Ռեկտորի ներկայացմամբ, պատճառաբանված որոշում է կայացնում ունկնդրին թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ համապատասխանաբար Արդարադատության խորհուրդ կամ գլխավոր դատախազին դիմելու մասին, եթե.

1) ունկնդիրը անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 20 տոկոսից.

2) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 50 տոկոսից, բացառությամբ տարկետում տրամադրելու դեպքերի.

3) Ակադեմիայում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքում ստացած քննական միավորը պակաս է կուրսը հանձնված համարելու համար Խորհրդի կողմից

սահմանված նվազագույն միավորից կամ չի անցել սույն օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված փորձաշրջանը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումը կայացնելու օրվանից հետո եռօրյա ժամկետում Խորհուրդը իր պատճառաբանված որոշումը և գործում առկա նյութերը ուղարկում է համապատասխանաբար Արդարադատության խորհուրդ կամ Գլխավոր դատախազին:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Խորհուրդը ունկնդրի դիմումի հիման վրա, կարող է պատճառաբանված որոշում կայացնել ունկնդրին մինչև համապատասխանաբար դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց հաջորդ մասնագիտական պատրաստումը տարկետում տրամադրելու վերաբերյալ:

4. Դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված ունկնդիրը համարվում է Ակադեմիայից ազատված համապատասխանաբար դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակից հանվելու պահից:

ԳԼՈՒԽ 6. ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ԱԿԱՂԵՄԻԱՅՈՒՄ

Հոդված 18. Ուսուցման գործընթացի հիմնական հասկացությունները

1. Ակադեմիայում ուսումնական գործընթացում կիրառվող հիմնական հասկացություններն են.

1) մասնագիտական պատրաստում՝ դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց առաջնային ուսուցում ուղղված վերջիններիս մոտ դատավորի կամ դատախազի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը.

2) վերապատրաստում՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման համար կոնկրետ ոլորտների ուսումնասիրության միջոցով կազմակերպվող պարտադիր ուսումնական գործընթաց.

3) լրացուցիչ վերապատրաստում՝ վերապատրաստման ուսուցման ծրագրերից դուրս առանձին ոլորտում անհրաժեշտ մասնագիտական, որակավորումը լրացնող ուսումնական գործընթաց.

4) հատուկ ուսուցում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններին ուսուցանելու նպատակով դատավորների՝ իրենց համաձայնությամբ, դատախազների և դատական կարգադրիչների ուսուցում.

5) ուսուցման ծրագիր՝ որոշակի մակարդակ և մասնագիտական ուղղվածություն ունեցող կրթության բովանդակություն, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալ.

6) ուսումնական պլան՝ ուսումնասիրվող առարկայական կուրսերի (դրանց բաժինների, թեմաների) անվանացանկը և ունկնդիրների ուսուցման տեսակները (դասախոսություն, սեմինար պարապմունք, գործնական աշխատանք, ինքնուրույն աշխատանք և այլն)։

7) դասավանդման սեղմագիր՝ ուսումնասիրվող առարկայական կուրսի կամ թեմայի կամ այլ նյութի վերաբերյալ իրականացվող դասընթացի բովանդակության գրավոր նկարագրություն։

8) ուսումնառության ժամկետ՝ տվյալ առարկայական կուրսի կրթական չափորոշիչով սահմանված ուսումնառության նվազագույն տևողություն։

9) կրթական չափորոշիչ՝ նորմատիվ, որը սահմանում է ընդհանուր պահանջներ ուսուցման ծրագրի վերաբերյալ, պահանջներ ուսուցման ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի, նրանց ներկայացվող դրական պահանջների, ունկնդիրների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալի, ուսուցման կազմակերպման ժամկետների վերաբերյալ։

10) հեռավար ուսուցում՝ համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության միջոցներով։

Հոդված 19. Ուսուցման ծրագիրը

1. Ուսումնական գործընթացն անցկացվում է Խորհրդի կողմից հաստատված կրթական չափորոշիչների հիման վրա կազմված և սույն օրենքով նախատեսված կարգով հաստատված ուսուցման ծրագրերով։

2. Ակադեմիայում իրականացվող ուսուցման ծրագրերն են՝

1) դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը.

2) սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց վերապատրաստման ծրագրերը.

3) սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց լրացուցիչ վերապատրաստման ծրագրերը.

4) դատավորների, դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցման ծրագրերը։

3. Կրթական չափորոշիչները հաստատվում են Խորհրդի կողմից սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով։

4. Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 1-ը դատարանների նախագահների խորհուրդը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, իսկ դատական կարգադրիչների դեպքում՝ նաև դատական դեպարտամենտի ղեկավարը, Ռեկտորին են

ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց հաջորդ տարվա ուսուցման ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների և Խորհրդի կողմից հաստատված կրթական չափորոշիչների հիման վրա՝ Ռեկտորը մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը Խորհրդի հաստատմանն է ներկայացնում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց հաջորդ տարվա ուսուցման ծրագրերը:

5. Ոչ ուշ, քան դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման համար որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարության հրապարակման պահից մեկամսյա ժամկետում դատարանների նախագահների խորհուրդը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը Ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների և Խորհրդի կողմից հաստատված կրթական չափորոշիչների հիման վրա՝ Ռեկտորը կազմում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման համապատասխան տարվա ուսուցման ծրագիրը՝ Ակադեմիայում դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ:

6. Ոչ ուշ, քան դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին հայտարարությունը հրապարակելու օրվանից երկշաբաթյա ժամկետում գլխավոր դատախազը, արդարադատության նախարարը և դատարանների նախագահների խորհուրդը Ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման հաջորդ տարվա ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների և Խորհրդի կողմից հաստատված կրթական չափորոշիչների հիման վրա՝ Ռեկտորը կազմում և դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման հայտարարության հրապարակման պահից մեկամսյա ժամկետում Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման հաջորդ տարվա ուսուցման ծրագիրը:

7. Խորհուրդը հաստատում է Ռեկտորի կողմից ներկայացված ծրագրերը կամ իր որոշմամբ Ռեկտորին առաջարկում է դրանցում կատարել փոփոխություններ: Ծրագրերում առաջարկված փոփոխությունների վերաբերյալ Ռեկտորի անհամաձայնության դեպքում Խորհուրդը իրավունք ունի ծրագրերը իր հաստատմանը կրկին ներկայացնելու օրվանից երկշաբաթյա ժամկետում հաստատել ծրագրերը իր համար նախընտրելի տարբերակով: Ծրագրերը սահմանված ժամկետում Խորհրդի կողմից չհաստատվելու դեպքում դրանք ընդունված են համարվում Ռեկտորի կողմից ներկայացված տարբերակով:

8. Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում համապատասխան մարմինների կողմից ատեստավորման կամ գործունեության գնահատման արդյունքներով դատախազների, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների նկատմամբ լրացուցիչ վերապատրաստում անցնելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում, որոշման կայացման պահից երկշաբաթյա ժամկետում այն ուղարկվում է Ռեկտորին՝ առաջարկություն ներկայացնելով սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսի կամ թեմաների վերաբերյալ: Նման առաջարկության հետ միաժամանակ Ռեկտորին է ներկայացվում նաև լրացուցիչ վերապատրաստման ունկնդիրների ցուցակը:

9. Գործնական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դատարանների նախագահների խորհուրդը, գլխավոր դատախազը կամ արդարադատության նախարարը՝ Ռեկտորին կարող են առաջարկություններ ներկայացնել սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ: Նման առաջարկության հետ միաժամանակ Ռեկտորին է ներկայացվում նաև լրացուցիչ վերապատրաստման ունկնդիրների ցուցակը կամ նշվում է թիրախային խումբը: Ռեկտորն իրավունք ունի իր նախաձեռնությամբ Խորհրդին ներկայացնել լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ:

10. Սույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված առաջարկության առկայության դեպքում, Ռեկտորը ողջամիտ ժամկետում կազմում և սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով Խորհրդի հաստատմանն է ներկայացնում լրացուցիչ վերապատրաստման ուսուցման ծրագիրը: Խորհուրդը կարող է մերժել լրացուցիչ վերապատրաստման ծրագրի իրականացումը:

11. Ռեկտորը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ուսուցման ծրագրերի հաստատումից հետո եռօրյա ժամկետում դրանք ուղարկում է համապատասխանաբար դեպարտամենտ և գլխավոր դատախազություն:

12. Ուսուցման ծրագիրը պետք է առնվազն ներառի՝

1) կրթական չափորոշիչները.

2) ուսուցման ձևը.

3) ուսումնառության ժամաքանակը և ժամկետը՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.

4) գնահատման եղանակը, եթե ուսուցման ավարտին նախատեսվում է գնահատում.

5) դասավանդվող առարկայական կուրսերի և դրանցում ներառվող թեմաների նկարագիրը:

13. Ուսուցման ծրագրի կատարումն ապահովելու համար կազմվում են ուսումնական պլան և դասավանդման սեղմագրեր:

Հոդված 20. Ունկնդիրներին ուսուցման ներգրավելու ընթացակարգը

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցման ծրագրերը սույն օրենքի 19-րդ հոդվածին համապատասխան Խորհրդի կողմից հաստատվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում Ռեկտորը ուղարկում է համապատասխանաբար դատարանների նախագահների խորհուրդ, դատական դեպարտամենտ և գլխավոր դատախազություն՝ վերապատրաստում անցնող անձանց կողմից սույն օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան առարկայական կուրսերի ընտրություն կատարելու նպատակով:

2. Դատարանների նախագահների խորհուրդը՝ դատավորների ու Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց մասով, դատական դեպարտամենտը՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների մասով, գլխավոր դատախազությունը՝ դատախազների ու դատախազության աշխատակազմում պետական ծառայողների մասով, յուրաքանչյուր տարի, մինչև դեկտեմբերի 1-ը, Ակադեմիա են ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում վերապատրաստման ենթակա անձանց ցուցակը՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան առարկայական կուրսերի ընտրության նշումով:

3. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման օրվանից եռօրյա ժամկետում համապատասխանաբար Արդարադատության խորհրդի աշխատակազմը և գլխավոր դատախազությունը Ակադեմիա են ներկայացնում մասնագիտական պատրաստման ենթակա անձանց ցուցակը:

4. Ռեկտորը վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ենթակա ունկնդիրների ներկայացված ցուցակների հիման վրա կազմում է սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրների ուսուցման ընդհանուր ժամանակացույց և ներկայացնում Խորհրդի հաստատմանը:

5. Վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ենթակա ունկնդիրներն ուսուցման դասընթացներ անցնում են՝ ըստ ժամանակացույցում նշված խմբերի:

6. Վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ենթակա ունկնդիրների ուսուցման ընդհանուր ժամանակացույցն ուղարկվում է համապատասխան պետական մարմնին ուսուցումը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

7. Դատարանների նախագահների խորհուրդը՝ դատավորների ու Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց մասով, դատական դեպարտամենտը՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների մասով, գլխավոր դատախազությունը՝ դատախազներ ու դատախազության աշխատակազմում պետական ծառայողների մասով, պատասխանատու են ուսուցման դասընթացներին ներկայանալու վերաբերյալ ունկնդիրների ծանուցումն ապահովելու համար:

Հոդված 21. Ուսուցման կազմակերպումը և իրականացումը

1. Ուսումնական գործընթացը կազմակերպվում է ուսումնական պլաններով, դասավանդման սեղմագրերով, ուսումնական ժամանակացույցով, ինչպես նաև Ռեկտորի կողմից հաստատված դասացուցակներով:

2. Ուսուցումն անցկացվում է դասախոսությունների, սեմինարների, ուսումնական դատախաղերի, բանավեճերի, կոնկրետ գործերի քննարկման միջոցով, ունկնդիրների ինքնակրթությունը խրախուսող դիդակտիկ նյութերի, տեսաժապավենների, ծայնագրված դասախոսությունների օգտագործմամբ և կրթական արդի այլ եղանակներով:

3. Ուսուցման ծրագրերն իրականացվում են առկա և հեռավար ձևերով: Ուսուցման ձևի ընտրությունը նախատեսվում է ուսուցման ծրագրում: Մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրն իրականացվում է միայն առկա ուսուցման ձևով:

4. Ակադեմիայում մասնագիտական պատրաստում անցած դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը ուսուցումը ավարտելու տարվան հաջորդող երեք տարվա ընթացքում համապատասխանաբար դատախազների կամ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու դեպքում, կարող է դիմել Խորհրդին առանձին առարկայական կուրս անցնելուց ազատվելու համար, եթե այդ առարկայական կուրսը կամ Խորհրդի որոշմամբ նույնաբովանդակ ճանաչված առարկայական կուրս է անցել նախորդ մասնագիտական պատրաստման ընթացքում: Այս դեպքում, համապատասխան առարկայական կուրսից ունկնդրի նախկինում ստացված գնահատականը համարվում է նաև այդ մասնագիտական պատրաստման շրջանակներում ընդգրկված առարկայական կուրսի գնահատական:

5. Եթե նախորդ մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդրի անցած սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված առարկայական կուրսի ժամաքանակը պակաս է մասնագիտական պատրաստման շրջանակներում ընդգրկված այն առարկայական կուրսի ժամաքանակից, որից ունկնդիրը դիմել է ազատվելու համար, ապա ունկնդիրը հանձնում է տարբերության քննություն՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով:

6. Դատավորները, դատախազները, ինչպես նաև Ակադեմիայի շրջանավարտ՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ունեն առաջարկվող վերապատրաստման առարկայական կուրսերի ընտրության իրավունք՝ սահմանված պահանջներին և ժամաքանակին համապատասխան: Դատարանների նախագահների խորհուրդը և գլխավոր դատախազը կարող են սահմանել Ակադեմիայի վերապատրաստման ծրագրերի առարկայական կուրսերի շրջանակում համապատասխանաբար դատավորների, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց և դատախազների առանձին խմբերի համար պարտադիր առարկայական կուրսեր:

7. Ունկնդիրների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

8. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված այն անձիք, ովքեր որպես դասախոս ներգրավված են Ակադեմիայում 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցման գործընթացին, համարվում են համապատասխան ժամաքանակով իրենց համար պարտադիր վերապատրաստումն անցած:

Հոդված 22. Ուսումնառության ժամաքանակը և ժամկետները

1. Ուսումնառության ժամաքանակի չափման միավորը մեկ ակադեմիական ժամն է, որի տևողությունը կազմում է 40 րոպե:

2. Դատավորների, դատախազների և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց պարտադիր վերապատրաստման ուսումնառության ժամաքանակը կազմում է առնվազն 80, բայց ոչ ավելի, քան 120 ակադեմիական ժամ:

3. Դատական ծառայողների և դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման, ինչպես նաև ըստ ատեստավորման կամ գնահատման արդյունքների՝ լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող դատախազների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների, դատական ծառայողների ուսումնառության ժամաքանակը սահմանվում է համապատասխանաբար Հանրապետության գլխավոր դատախազի և Դատարանների նախագահների խորհրդի կողմից, իսկ դատական կարգադրիչների պարագայում՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից:

4. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց ուսումնառության ժամկետի տևողությունը առնվազն 7 ամիս, բայց ոչ ավելի քան 10 ամիս է:

5. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման գործընթացը, որպես կանոն, սկսվում է թեկնածությունների ցուցակի համալրումն ավարտվելու ամսվան հաջորդող ամսվանից:

Հոդված 23. Փորձաշրջանը

1. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված մասնագիտական պատրաստում անցնող անձինք անցնում են պարտադիր փորձաշրջան: Փորձաշրջանի տևողությունը սահմանվում է համապատասխան ուսուցման ծրագրով, սակայն չի կարող պակաս լինել 3 ամսից:

2. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ ուսուցման ծրագրում նշված ուղղությունների:

3. Փորձաշրջանի ժամանակ ունկնդիրը պարտավոր է պատշաճ կերպով կատարել անհատական ծրագրով նախատեսված առաջադրանքները:

Հոդված 24. Փորձաշրջանի ղեկավարը

1. Դատարանների նախագահների խորհուրդը և գլխավոր դատախազը մասնագիտական պատրաստման դասընթացները սկսվելուց հետո երկշաբաթյա ժամկետում Ռեկտորին են ներկայացնում այդ տարվա ունկնդիրների փորձաշրջանի կազմակերպման համար համապատասխան դատարանների և դատախազությունների ցանկը, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների անունները և պաշտոնը՝ հիմք ընդունելով այդ ուսումնական տարվա ունկնդիրների մասնագիտացումները:

2. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում Ռեկտորը կարող է դիմել Դատարանների նախագահների խորհուրդ և գլխավոր դատախազին սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան փորձաշրջանի այլ ղեկավարներ նշանակելու համար:

3. Ունկնդիրների բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների կատարվում է Ռեկտորի կողմից: Գլխավոր դատախազը, Ռեկտորի կողմից ներկայացված բաշխմանը համապատասխան, իր հրամանով անձին նշանակում է փորձաշրջանի ղեկավար:

4. Ունկնդիրների ըստ փորձաշրջանի ղեկավարների բաշխումը Ռեկտորի կողմից պետք է կատարվի այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին տեղեկությունների հաշվառմամբ, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել ունկնդրի նկատմամբ փորձաշրջանի ղեկավարի անկողմնակալության մեջ:

5. Ունկնդիրը կամ փորձաշրջանի ղեկավարը պարտավոր են Ռեկտորին հայտնել այն փաստերի և հանգամանքների մասին, որոնք կարող են կասկած հարուցել փորձաշրջանի ղեկավարի անկողմնակալության մեջ, այն պահից 7 օրվա ժամկետում, երբ նրանք իմացել են կամ ողջամտորեն կարող էին իմանալ դրանց առկայության մասին:

6. Փորձաշրջանի ղեկավարը պարտավոր է՝

1) կազմակերպել ունկնդրի ուսուցումը Ռեկտորի կողմից հաստատված անհատական ծրագրին համապատասխան:

2) նպաստել ունկնդրի մասնագիտական գիտելիքների խորացմանը, գործնական հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը:

3) հետևել ունկնդրի կողմից անհատական ծրագրով նախատեսված պարտականությունների պատշաճ կատարմանը:

4) փորձաշրջանի ընթացքում ունկնդրի կողմից թերացումներ նկատելու դեպքում հայտնել ունկնդրին, իսկ էական թերացումներ նկատելու դեպքում՝ նաև Ռեկտորին:

Հոդված 25. Փորձաշրջանի արդյունքների ամփոփումը

1. Փորձաշրջանի ավարտից հետո ունկնդիրը, փորձաշրջանի ղեկավարի հաստատմամբ, Ռեկտորին է ներկայացնում փորձաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ խորհրդի կողմից սահմանված ձևի հաշվետվություն:

2. Փորձաշրջանի ավարտին, իսկ անհատական ծրագրով նախատեսված դեպքերում՝ նաև փորձաշրջանի ընթացքում, ղեկավարը Ռեկտորին է հանձնում Խորհրդի կողմից սահմանված ձևի գնահատագիր, որով փորձաշրջանի ընթացքում ունկնդրի գործունեության արդյունքների, նրա դրսևորած գործնական և անձնական հատկանիշների նկարագրությամբ՝ ունկնդրի փորձաշրջանը գնահատում է դրական կամ բացասական:

3. Ունկնդիրը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու իր գնահատագրին և փորձաշրջանի գնահատականը կարող է բողոքարկել Խորհուրդ՝ գնահատագրին ծանոթանալու պահից եռօրյա ժամկետում:

Հոդված 26. Գնահատման և բողոքարկման հանձնաժողովները

1. Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով, որի կազմի մեջ են մտնում Դատարանների նախագահների խորհրդի կողմից իրենց համաձայնությամբ նշանակված 5 դատավոր և արդարադատության նախարարի կողմից նշանակված գիտության համապատասխան բնագավառի 2 մասնագետ:

2. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են զլխավոր դատախազի կողմից նշանակված 5 դատախազ և արդարադատության նախարարի կողմից նշանակված գիտության համապատասխան բնագավառի 2 մասնագետ:

3. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց գնահատման հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի կազմից ձայների մեծամասնությամբ ընտրված անդամը:

4. Դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի ղեկավարի կողմից դատական ղեկարտամենտից նշանակված չորս անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ՝ նշելով հանձնաժողովի նախագահին:

5. Դատախազության աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են զլխավոր դատախազի կողմից նշանակված չորս անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ՝ նշելով հանձնաժողովի նախագահին:

6. Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննությունների արդյունքների հետ կապված բողոքները

քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով, որի կազմի մեջ են մտնում Դատարանների նախագահների խորհրդի կողմից իրենց համաձայնությամբ նշանակված 2 դատավոր և արդարադատության նախարարի կողմից նշանակված իրավունքի համապատասխան բնագավառի մեկ մասնագետ:

7. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննությունների արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով, որի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակված 2 դատախազ և արդարադատության նախարարի կողմից նշանակված գիտության համապատասխան բնագավառի մեկ մասնագետ:

8. Դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից դատական դեպարտամենտից նշանակված երկու անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:

9. Դատախազության աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են գլխավոր դատախազի կողմից նշանակված երկու անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:

10. Խորհրդի անդամը չի կարող ընդգրկվել սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների կազմում:

11. Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների կազմերը ձևավորելիս պետք է ապահովվի դրանց կազմում ստուգման ենթակա առարկայական կուրսի (կուրսերի) վերաբերյալ համապատասխան գիտելիքների տիրապետող անձանց նշանակումը:

12. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված մասնագիտական պատրաստման արդյունքների գնահատման և բողոքարկման հանձնաժողովները ձևավորվում են մասնագիտական պատրաստման արդյունքների ստուգումից ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջ և լուծարվում են արդյունքների ամփոփման և բողոքարկման ժամկետները լրանալուց հետո: Սույն հոդվածի 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված հանձնաժողովները ձևավորվում են յուրաքանչյուր տարվա սկզբին:

13. Սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

1) իր հիմնական պաշտոնում լիազորությունները դադարելու և նույն համակարգում այլ պաշտոնի չնշանակվելու դեպքում:

2) իր դիմումի համաձայն.

3) եթե համապատասխան անդամին նշանակած մարմինը, քննարկելով սույն հոդվածի 14-րդ մասին համապատասխան ներկայացված փաստերը կամ հանգամանքները, գտնում է, որ դրանք կարող են ողջամիտ կասկած հարուցել հանձնաժողովի անդամի անկողմնակալության հարցում:

14. Հանձնաժողովի անդամը պարտավոր է իրեն նշանակած մարմին գրավոր հայտնել, եթե տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել գնահատման կամ բողոքարկման գործընթացին նրա մասնակցության անկողմնակալության հարցում:

15. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում նոր անդամը նշանակվում է համապատասխան հանձնաժողովի անդամի նշանակման համար սույն հոդվածով սահմանված կարգով՝ հանձնաժողովի կազմից դուրս եկած անդամի լիազորությունների մնացած ժամանակահատվածով:

16. Հանձնաժողովի անդամները վարձատրվում են Արդարադատության ակադեմիայի միջոցների հաշվին:

Հոդված 27. Քննությունների անցկացման և արդյունքների բողոքարկման կարգը

1. Արդարադատության ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները, որպես կանոն, գնահատվում են գրավոր քննությունների միջոցով: Գրավոր քննության համար նախատեսված կարգից բացառությունների կարող են նախատեսվել խորհրդի որոշմամբ այն առարկայական կուրսերից հանձնվող քննությունների համար, որոնք չեն կարող անցկացվել գրավոր եղանակով:

2. Գրավոր քննության արդյունքների ստուգումը և գնահատումը գնահատման հանձնաժողովի կողմից իրականացվում է անանուն:

3. Գրավոր քննության յուրաքանչյուր աշխատանքի ստուգումը իրականացվում է սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված երկու ստուգողների կողմից, որոնցից մեկը պետք է լինի համապատասխանաբար դատավոր, դատախազ, դատական դեպարտամենտի ղեկավարի կամ գլխավոր դատախազի կողմից նշանակված անձը, իսկ մյուսը՝ գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:

4. Եթե դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում նախատեսված գրավոր քննության՝ սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ստուգման արդյունքներով ստուգողների կողմից նշանակված միավորներում առկա է առնվազն 20 տոկոսից ավելի շեղում, նշանակվում է լրացուցիչ ստուգում, որին մասնակցում են գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված համապատասխանաբար մեկ այլ դատավոր կամ դատախազ և գիտության համապատասխան բնագավառի՝

արդարադատության նախարարի կողմից նշանակված մյուս մասնագետը, իսկ դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների պարագայում՝ ստուգումը իրականացվում է հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված երկու այլ ստուգողների կողմից:

5. Գնահատման հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ծանոթանալ ստուգված գրավոր աշխատանքին և ներկայացնել իր նկատառումները:

6. Ակադեմիայում գրավոր քննության ստուգման արդյունքներով վերջնական գնահատականը որոշվում է գնահատման հանձնաժողովի կողմից՝ առնվազն 4 ձայնով ընդունված որոշմամբ: Եթե գնահատման հանձնաժողովը անհրաժեշտ ձայներով որոշում չի կայացնում վերջնական գնահատականի վերաբերյալ, այն որոշվում է համապատասխանաբար 2, իսկ լրացուցիչ ստուգում նշանակված լինելու դեպքում՝ 4 ստուգողների նշանակած գնահատականների միջինով:

7. Ակադեմիայում քննության ժամանակ ունկնդրին տրվող հարցերը պետք է բխեն ուսումնական ծրագրի շրջանակներում մատուցված նյութից:

8. Ստուգված գրավոր աշխատանքները պետք է պարունակեն դրանցում առկա թերությունների վերաբերյալ ստուգողների կողմից կատարված համապատասխան նշումներ, որոնք հնարավորություն կտան եզրահանգումներ անել գնահատման հիմքում ընկած հանգամանքների մասին:

9. Ունկնդիրը իրավունք ունի դիմել և գնահատման հանձնաժողովի անդամներից ստանալ իր գնահատականի վերաբերյալ լրացուցիչ բանավոր պարզաբանումներ:

10. Յուրաքանչյուր ունկնդիր, գնահատման հանձնաժողովի որոշման հրապարակման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, կարող է դիմել բողոքարկման հանձնաժողով, եթե համարում է, որ խախտվել է քննությունների անցկացման ընթացակարգը կամ վիճարկում է քննության գնահատականը:

11. Քննության ընթացակարգը կամ գնահատականը բողոքարկելիս ունկնդիրը պետք է հստակ նշի բողոքի հիմքում ընկած հանգամանքները և իր հիմնավորումները:

12. Գրավոր աշխատանքը և բողոքը բողոքարկման հանձնաժողովին տրամադրվում են անանուն:

13. Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

14. Քննության հետ կապված որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան միայն քննությունների անցկացման ընթացակարգի, գրավոր աշխատանքների ստուգման, գնահատման և բողոքարկման ընթացակարգային նորմերի խախտման հիմքով:

15. Ռեկտորը ապահովում է գրավոր քննությունների ողջ ընթացքի տեսաձայնագրումը:

16. Ունկնդիրն իրավունք ունի ստանալ գրավոր քննության ողջ ընթացքի տեսաձայնագրության կրկնօրինակը, ինչպես նաև գրավոր քննության ստուգված ցանկացած աշխատանքի պատճենները:

17. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը և արդարադատության նախարարը՝ դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց պարագայում, դատական դեպարտամենտի ղեկավարը՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների պարագայում, իսկ գլխավոր դատախազը՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց և դատախազության աշխատակազմում պետական ծառայողների պարագայում, կարող են ցանկացած ժամանակ դիմել և եռօրյա ժամկետում ստանալ քննության տեսագրության կրկնօրինակը և գրավոր քննության ստուգված աշխատանքների պատճենները:

Հոդված 28. Ուսուցման արդյունքների ամփոփումը

1. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը համարվում է մասնագիտական պատրաստումն անցած, եթե նա առարկայական կուրսերից բոլոր քննությունների արդյունքներով ստացել է դրական գնահատական և դրական է գնահատվել փորձաշրջանի արդյունքներով:

2. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի՝ Ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորը հաշվարկվում է առարկայական կուրսերից հանձնած բոլոր քննությունների գնահատականների հիման վրա:

3. Դատական ծառայողները, դատական կարգադրիչները, դատախազության աշխատակազմում պետական ծառայողները համարվում են վերապատրաստումը կամ լրացուցիչ պատրաստումն անցած դրական գնահատվելու արդյունքում:

4. Դատավորը, դատախազը, դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը համարվում է վերապատրաստումը կամ լրացուցիչ վերապատրաստումն անցած, եթե նա մասնակցել է վերապատրաստման կամ լրացուցիչ վերապատրաստման համապատասխան առարկայական կուրսի բոլոր ժամերին, այդ թվում, երբ նրա բացակայությունը Ռեկտորի կողմից ձանաչվել է հարգելի:

5. Ունկնդրի՝ համապատասխան առարկայական կուրսով անցած վերապատրաստումը չի գնահատվում, եթե սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան հարգելի ձանաչված բացակայությունները գերազանցում են վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսի ժամաքանակի քսան տոկոսը: Այս դեպքում ունկնդրին հնարավորություն է տրվում կրկին անցնել նույնաբովանդակ առարկայական կուրսը կամ Խորհրդի կողմից սահմանված կարգով անցնել Խորհրդի կողմից համարժեք սահմանված այլ առարկայական կուրս:

Հոդված 29. Ունկնդիրների վերաբերյալ տեղեկատվության հաշվառումը

1. Ուսումնառության ժամանակ Ակադեմիան վարում է ունկնդիրների հաճախելիության մատյաններ:

2. Ուսումնառության արդյունքների վերաբերյալ Ակադեմիան վարում է հաշվառման մատյան, որտեղ նշվում է ունկնդրի անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, ուսումնառության ժամկետները և խորհրդի որոշմամբ սահմանված այլ տեղեկություններ:

3. Ակադեմիան յուրաքանչյուր ուսումնական ծրագրի ավարտից հետո համապատասխանաբար Ղատարանների նախագահների խորհրդին՝ դատավորների ու Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց մասով, դատական դեպարտամենտին՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների մասով, գլխավոր դատախազին՝ դատախազների ու դատախազության աշխատակազմում պետական ծառայողների մասով, ամփոփ տեղեկանք է ներկայացնում՝ Ակադեմիայում ուսուցումն անցած ունկնդիրների ուսումնառության արդյունքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓՈՎԻՉ ԵՎ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 30. Օրենքի ուժի մեջ մտնելը և հետադարձ ուժը

1. Սույն օրենքը, բացառությամբ 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 21-29-րդ, հոդվածների, ուժի մեջ է մտնում 2013 թվականի սեպտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքի 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 21-29-րդ հոդվածները ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից և տարածվում են 2014 թվականի հունվարի 1-ից Ակադեմիայի կողմից իրականացվող ուսուցման գործընթացների նկատմամբ:

3. Մինչև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նորմերի ուժի մեջ մտնելը և Ակադեմիայի կողմից ուսուցման ծրագրերի մասով գործառույթներ իրականացնելը դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման և դատավորների, դատախազների, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման հարաբերությունների վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի և «Դատախազության մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:

4. Բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, 23-25-րդ հոդվածների, սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում ուսումնառություն անցած և 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ թեկնածությունների ցուցակում գտնվող ունկնդիրների վրա:

Հոդված 31. «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների լուծարումը

1. «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու մասին

համապատասխանաբար՝ դատարանների նախագահների խորհրդի և գլխավոր դատախազի որոշումներն ընդունվում են մինչև 2013թ. դեկտեմբերի 15-ը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող գույքը, դրանց պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ուղղվում է պետական բյուջե:

3. «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը սկսված ուսուցման ծրագրերը մինչև սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետը շարունակվում են «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից: Նշված ժամկետի ավարտից հետո «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ուսուցման ծրագրերը շարունակվում են Արդարադատության ակադեմիայի կողմից՝ Խորհրդի որոշմամբ դրանցում, ըստ անհրաժեշտության, կատարելով փոփոխություններ:

Հոդված 32. Ակադեմիայի ստեղծումը և կանոնադրության ընդունումը

1. Ակադեմիան ստեղծվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում:
2. Ակադեմիայի ստեղծման պահից 40-օրյա ժամկետում Խորհուրդը մշակում և սույն օրենքով սահմանված կարգով կառավարություն է ներկայացնում Ակադեմիայի կանոնադրությունը, որն ընդունվում է կառավարության կողմից՝ Կանոնադրությունը Խորհրդից ստացվելու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում:
3. Եթե Խորհուրդը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում Ակադեմիայի կանոնադրությունը չի ներկայացնում կառավարություն, ապա կառավարությունը ժամկետի ավարտմանը հաջորդող մեկամսյա ժամկետում մշակում և ընդունում է Կանոնադրությունը:

Հոդված 33. Ակադեմիայի կառավարման և ղեկավարման մարմինների ձևավորումը

1. Խորհրդի անդամները նշանակվում են Ակադեմիայի ստեղծման պահից երկշաբաթյա ժամկետում:

2. Առաջին գումարման Խորհրդում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան նշանակվող մեկական դատավոր և դատախազ անդամ նշանակվում են՝ երկու, մեկական դատավոր և դատախազ անդամ՝ երեք և մեկական դատավոր և դատախազ անդամ՝ չորս տարի ժամկետով:

3. Խորհրդի առաջին նիստը հրավիրում և նախագահում է Խորհրդի տարիքով ավագ անդամը՝ Ակադեմիայի ստեղծման պահից 21-օրյա ժամկետում:

4. Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի առաջին նիստի ընթացքում:

5. Խորհրդի առաջին նիստից հետո ոչ ուշ, քան մեկշաբաթյա ժամկետում Խորհուրդը սույն օրենքով սահմանված կարգով հայտարարում է Ռեկտորի թափուր պաշտոնի համար մրցույթ:

Հոդված 34. Ուսումնական գործընթացի կազմակերպումը Ակադեմիայի ստեղծման առաջին տարում

1. Ակադեմիայի Ռեկտորի նշանակումից հետո երկշաբաթյա ժամկետում «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները Ակադեմիային են փոխանցում իրենց կողմից իրականացված և իրականացվող ուսումնական ծրագրերի հետ կապված նյութերը, այնպես, որ հնարավոր լինի ապահովել մասնագիտական պատրաստման և վերապատրաստման գործընթացի շարունակականությունը:
2. Ակադեմիայի Ռեկտորի նշանակումից հետո երկշաբաթյա ժամկետում դատարանների նախագահների խորհուրդը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, իսկ դատական կարգադրիչների դեպքում՝ նաև դատական դեպարտամենտի ղեկավարը, Ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց 2014 թվականի ուսուցման ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների հիման վրա Ռեկտորը, մինչև 2014 թվականի հունվարի 20-ը, Խորհրդի հաստատմանն է ներկայացնում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց 2014 թվականի ուսուցման ծրագրերը:
3. Խորհուրդը, Ռեկտորի կողմից ուսուցման ծրագրերը հաստատման ներկայացնելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում, հաստատում է Ռեկտորի կողմից ներկայացված ծրագրերը կամ իր որոշմամբ Ռեկտորին առաջարկում է դրանցում կատարել փոփոխություններ: Ծրագրերում առաջարկված փոփոխությունները կատարելու վերաբերյալ Ռեկտորի անհամաձայնության դեպքում Խորհուրդն իրավունք ունի ծրագրերը իր հաստատմանը կրկին ներկայացնելու օրվանից մեկշաբաթյա ժամկետում հաստատել ծրագրերը իր համար նախընտրելի տարբերակով: Ծրագրերը սահմանված ժամկետում Խորհրդի կողմից չհաստատվելու դեպքում դրանք ընդունված են համարվում Ռեկտորի կողմից ներկայացված տարբերակով:
4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցման ծրագրերը հաստատվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում Ռեկտորը դրանք ուղարկում է համապատասխանաբար դատարանների նախագահների խորհուրդ, դատական դեպարտամենտ և գլխավոր դատախազություն՝ վերապատրաստում անցնող անձանց կողմից սույն օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան առարկայական կուրսերի ընտրություն կատարելու նպատակով:

5. Դատարանների նախագահների խորհուրդը՝ դատավորների ու Դատական դպրոցում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց մասով, դատական դեպարտամենտը՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների մասով, գլխավոր դատախազությունը՝ դատախազների ու դատախազության աշխատակազմում պետական ծառայողների մասով, ուսուցման ծրագրերը ուղարկելուն հաջորդող 21-օրյա ժամկետում Ակադեմիա են ներկայացնում 2014 թվականի ընթացքում վերապատրաստման ենթակա անձանց ցուցակը՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան առարկայական կուրսերի ընտրության նշումով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Արդարադատության ակադեմիայի մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման

1. Անհրաժեշտությունը

Իրավական պետության կառուցման և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ երաշխավորելու Սահմանադրորեն ամրագրված դրույթները լուրջ մարտահրավեր են արդարադատության և իրավապահ մարմինների պրոֆեսիոնալ գործառնության համար: Վերջիններիս հեղինակությունը և գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դրանցում ներգրավված կադրերի հատուկ մասնագիտական պատրաստվածությամբ և շարունակական վերապատրաստմամբ: Պրոֆեսիոնալ կադրերի առկայությունը պահանջում է պետության կողմից համապատասխան պայմանների ապահովում դատական և դատախազական համակարգի կադրերի կրթումը և վերապատրաստումը իրատեսական դարձնելու համար:

Դատական և դատախազական համակարգերը մասնագիտացված կադրերով սնուցելու գործառույթը 2007թ. ընդունված Դատական օրենսգրքով և «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքով նախատեսված առ այսօր վերապահված է երկու առանձին կազմակերպությունների՝ «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններին: Դատաիրավական նշանակալի բարեփոխումների և դրանց ադապտացման անցումային այս շրջանի համար նշված կառույցների ստեղծումը և գործունեությունը զգալի առաջընթաց էր կադրերի մասնագիտական պատրաստման առումով: Այդուհանդերձ, ժամանակի մարտահրավերները պահանջում են կրթական ընթացակարգերի էլ ավելի կատարելագործում, կրթական կառույցների կառավարման և կրթական գործընթացի կազմակերպման օպտիմալացում, առավել քիչ միջոցների օգտագործմամբ, սակայն առավել արդյունավետ կերպով նույն նպատակների հասնելու հնարավորություն:

Դատական և դատախազական համակարգերի համար կադրերի պատրաստման և վերապատրաստման հարցում մեկ միասնական կառույցի գործառնության գաղափարը համահունչ է ժամանակակից միջազգային զարգացումներին և դրա արդյունավետությունը

սատարվում է տարբեր միջազգային փաստաթղթերում:¹ Համատեղ ուսուցման կազմակերպման գաղափարը իրացվում է Ֆինլանդիայում, Սլովենիայում, Սլովակիայում, Լեհաստանում, Ալբանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Հունաստանում, Իտալիայում, Ռումինիայում, Սլովակիայում, Մոնտենեգրոյում, Մակեդոնիայում, Չեխիայում և այլ երկրներում²:

Գերմանիայում, Ավստրիայում համատեղ վերապատրաստումն իրականացվում է դատավորների և դատախազների վերապատրաստման ժամանակ:

Եվրոպայի դատավորների խորհրդի խորհրդակցական խորհուրդը (CCJE) իր 2003թ.-ի կարծիքում խրախուսել է համատեղ մասնագիտական պատրաստման և վերապատրաստման գաղափարը, նշելով, որ «անգամ այն երկրներում, որտեղ դատախազները իրականացնում են դատավորի գործառույթներից առանձնացված գործառույթներ», համատեղ ուսուցումը խթանում է դատավորների և այլ մասնագիտությունների միջև փոխըմբռնումը, գիտելիքների մակարդակը:³

Դատավորների և դատախազների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման համար փոխգործակցությունը խթանելու համար ստեղծված ԵՄ Լիսաբոնի գործընկերության փաստաթղթում ևս ընդգծվում է, որ համատեղ ուսուցումը նախընտրելի եվրոպական մոտեցումն է:⁴

Հայաստանի Հանրապետությունում դատավորների և դատախազների համատեղ կրթության կազմակերպման նախադրյալները բխում են նաև «Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հանրապետության Նախագահի 2009թ. մայիսի 6-ի ՆԿ 68-Ա Կարգադրության 30-րդ կետի պահանջներից, «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» Հանրապետության Նախագահի 2009 թ. ապրիլի 21 ՆԿ-59-Ն Կարգադրության 7-րդ մասի 11)-րդ կետի և Հավելված 2-ի 3.11 կետի պահանջներից⁵:

¹ Raffaele Sabato, European Network For The Exchange Of Information Between Persons And Entities Responsible For The Training Of Judges And Public Prosecutors, RL (2006) 61; Opinion No. 4 (2003) of the Consultative Council of European Judges (CCJE) for the attention of the Committee of Ministers of the Council of Europe on Appropriate Initial and In-Service Training of Judges at National and European Level, paragraph 29; Explanatory Memorandum to § 18 of Recommendation Rec (2000) 19 on the Role of Public Prosecution in the Criminal Justice System.

² Communication from the Commission to the European Parliament and the Council on judicial training in the European Union (Com/2006/0356 final)

³ Opinion No. 4 (2003) of the Consultative Council of European Judges (CCJE) for the attention of the Committee of Ministers of the Council of Europe on Appropriate Initial and In-Service Training of Judges at National and European Level, paragraph 29

⁴ European Network For The Exchange Of Information Between Persons And Entities Responsible For The Training Of Judges And Public Prosecutors, RL (2006) 61; պարագրաֆ 2:

⁵ Կարգադրության 7-րդ մասի 11)-րդ կետում սահմանված է «Ներկայումս գործում են երկու առանձին կառույցներ, որոնցից մեկը զբաղվում է դատավորների և դատախազների թեկնածուների ուսուցմամբ, իսկ մյուսը՝ դատախազների վերապատրաստմամբ և դատախազների թեկնածուների ուսուցմամբ: Պետության ծախսերը կրճատելու, ինչպես նաև օրենսդրության միատեսակ մեկնաբանության և

2. Կարգավորման նպատակը և բնույթը

«Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի մասին» նախագծի ընդունմամբ ակնկալվող առաջընթացը ընդգծվում է մասնավորապես, ստորև ներկայացվող մի շարք տեսանկյուններից.

1. Ռեսուրսների օպտիմալ կառավարում: Մեկ կառույցում ուսումնառության կազմակերպումը հնարավորություն է տալիս դատական և դատախազական համակարգի կադրերի համար ընդհանուր թեմաներով համատեղ առարկայական կուրսերի դասավանդումը, ինչը արդարացված է և՛ դասավանդող մասնագետների ներգրավման, և՛ դասընթացի կազմակերպման համար հատկացվող ռեսուրսների օպտիմալ տնտեսման տեսանկյունից:

Կրթական գործընթացի կազմակերպումը օպտիմալացնելու արդյունքում ազատ ֆինանսական միջոցները հնարավոր է դառնում ուղղորդել ինովացիոն տեխնոլոգիաների, ուսուցման նոր մեթոդների և միջոցների ներդրմանը (օրինակ՝ հեռավար կամ էքստերն կամ էլեկտրոնային ուսուցման կազմակերպումը), որոնք էլ իրենց հերթին կառաջացնեն նոր խնայողություններ (օրինակ՝ որոշակի դեպքերում կարելի է ձեռնպահ մնալ գործուղման, հյուրանոցային և սննդի ապահովման ծախսերից) և կուղղվեն մյուս հիմնախնդիրների պատշաճ կատարմանը:

2. Դատախազական և դատական համակարգերի մասնագիտական մերձեցում: Հաջորդ կարևորագույն ասպեկտներից է բարոյահոգեբանական գործոնը, կադրերի սոցիալիզացիան: Դատավորների և դատախազների որոշ տեսական և գործնական ծրագրերով համատեղ ուսուցումն ու վերապատրաստումը բարենպաստ ազդեցություն կունենա ոչ միայն ուսուցման գործընթացում փորձի փոխանակման, այլ նրանց հետագա միասնական աշխատանքի վրա:

3. Կրթական մեթոդոլոգիայի կատարելագործում: Արդարադատության ակադեմիայի ստեղծումը հնարավորություն կտա աշխատանքներ տանել ժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցում կազմակերպելու ուղղությամբ: Միասնական դպրոցի ստեղծումը թույլ կտա նաև կուտակված փորձը և դասավանդող մասնագետների հետ հաստատված կապերը հավասարապես արդյունավետ ուղղել և՛ դատական, և՛ դատախազական համակարգի կադրերի պատրաստման վրա:

Հարկ է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում արհեստավարժ կադրերի պատրաստման, նրանց վերապատրաստման և մասնագիտական պատրաստման գործընթացները դեռևս հեռու են բավարար լինելուց, քանի որ նշյալ ոլորտում համակարգված վերլուծական և հետազոտական աշխատանքներ, ըստ էության, չեն տարվում: Հայաստանի Հանրապետությունում իրականացված ուսումնական գործընթացների գնահատման և դրանք ըստ արժեքային համակարգի դասակարգման

կիրառման համար նպատակահարմար է ստեղծել դատավորների և դատախազների ուսուցման և վերապատրաստման միասնական մեկ համակարգ.»

արդյունքում, կարելի է տարանջատել որոշ հիմնախնդիրներ, որոնց լուծումը կարող է խթան հանդիսանալ ուսումնական գործընթացների որակական փոփոխության և նպատակայնության ապահովման համար: Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների շրջանակը պահանջում է յուրահատուկ մոտեցում կրթական գործընթացի կազմակերպմանը: Համապատասխան գիտելիքի մատուցումը միայն դասախոսության միջոցով խնդիրներ է ստեղծում դրա ընկալման առումով, քանի որ կարճ ժամանակահատվածում փորձ է արվում բավականին մեծ տեղեկատվություն հաղորդել ունկնդրին: Նշվածը որոշակի դեպքերում կարող է մտավոր արգելակում առաջացնել ունկնդրի մոտ, կասկածի տակ առնել ուսուցման արդյունավետությունը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով ֆինանսական սուղ միջոցները, Արդարադատության ակադեմիայի ստեղծումը հնարավորություն կտա աշխատանքներ տանել ուսուցանման գործընթացում ժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցում կազմակերպելու ուղղությամբ: Դա միևնույն ժամանակ ապագայում համապատասխան բազա կստեղծի հեռավար ուսուցում կազմակերպելու համար, որի պարագայում կօգտագործվեն համակարգչային տեխնոլոգիաների հնարավորությունները՝ վիրտուալ իրականություններ ստեղծելու, մատուցվող նյութին տիրապետելու համար ունկնդիրներին առավել շատ ժամանակ ընձեռելու և այլ հմտություններ ձևավորելու ու կատարելագործելու հարցում: Նախագծով նախատեսվել է ուսուցումը անցկացնել դասախոսությունների, սեմինարների, ուսումնական դատախաղերի, բանավեճերի, ընդունված դատական ակտերի եւ դրանց յուրահատկությունների շուրջ հարցերի քննարկման, դատարաններում կոնկրետ գործերին ծանոթանալու, ինքնակրթությունը խրախուսող դիդակտիկ նյութերի, տեսաժապավենների, ձայնագրված դասախոսությունների օգտագործմամբ եւ կրթական արդի այլ եղանակներով ու մեթոդներով: Այս առումով, միասնական դպրոցի ստեղծումը թույլ կտա նաև կուտակված փորձը և դասավանդող մասնագետների հետ հաստատված կապերը հավասարապես արդյունավետ ուղղել և՛ դատական, և՛ դատախազական համակարգի կադրերի պատրաստման վրա:

4. **Դատական ու դատախազական համակարգերի կադրերի պատրաստման բնագավառում միասնական գաղափարախոսության ձևավորում:** Ակադեմիայի շրջանակներում աստիճանական կերպով զարգանալու է դատական ու դատախազական համակարգերի կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը ներկայացվող պահանջների բնագավառում միասնական պետական գաղափարախոսությունը: Ակադեմիայում կուտակված փորձը և դրա շարունակական վերլուծությունը կնպաստի կրթական գործընթացի կայուն զարգացմանն ու կատարելագործմանը: Այս առումով, հարկ է շեշտադրել նաև այն հանգամանքը, որ Ակադեմիայի կառավարման և ղեկավարման մարմինների կառուցվածքը ևս նախատեսված է այն հաշվով, որ հնարավոր լինի ապահովել կրթական գործընթացում շահառու պետական մարմինների, մասնավորապես՝ դատարաններ, դատախազություն, դատական դեպարտամենտ, դատարանների նախագահների խորհուրդ, գործադիր իշխանություն,

ներկայացվածությունը և մասնակցությունը: Ընդ որում, ինչպես Ակադեմիայի կառավարման, այնպես էլ կրթական գործընթացին առնչվող որոշումների ընդունմանը շահառու պետական մարմինների մասնակցությունը իր հիմքում ունի զսպումների և հակակշիռների մեխանիզմը, ինչը օրինաչափ պահանջ է պրոֆեսիոնալ արդարադատության մարմինների համակարգ ունենալուն ձգտող պետության կարիքների համար:

5. **Ուսուցման գործընթացի հստակ կանոնակարգում:** «Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը թույլ է տալիս մեկ ակտով համակարգված օրենսդրական կանոնակարգման ենթարկել կրթական գործընթացի ողջ ընթացքը՝ կրթական ծրագրերի բովանդակության ուղենիշների ձևավորումից սկսած մինչև ակադեմիայում քննական գործընթացները, հանձնաժողովների կազմերը, արդյունքների ստուգման կարգը:

6. **Լրացուցիչ ֆինանսական և խորհրդատվական ռեսուրսների ուղղորդում և դատախազների, և դատավորների կրթության կազմակերպմանը համար:** Դատավորների և դատախազների կրթական գործընթացի համատեղ կազմակերպման օգտին է վկայում մեկ այլ փաստարկ ևս: «Աջակցություն արդարադատության մատչելիությանը Հայաստանում» (Եվրոպական հանձնաժողով/Եվրոպայի խորհուրդ) ծրագրի բաղադրիչներից մեկը վերաբերվում է դատական դպրոցին աջակցություն ցույց տալուն, որով նախատեսվում է 250 հազ եվրոյի չափով տեխնիկական աջակցություն: Համատեղ կրթական հաստատության առկայության պարագայում, ստացվող խորհրդատվական և տեխնիկական աջակցությունը ուղղվում է և՛ դատախազների և՛ դատավորների կրթական համակարգերի բարելավմանը: Մինչդեռ, առանձին դատախազության համար որևէ աջակցություն չի նախատեսվում գործող ծրագրերի շրջանակներում:

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընկած է նաև 2009թ սեպտեմբերի 28-ին ՀՀ կառավարության և Եվրոպական Հանձնաժողովի միջև կնքված «Աջակցություն Հայաստանում դատախարավական ոլորտի բարեփոխումներին» ծրագրի արդյունքների ստուգող առաքելության կողմից հաշվետվության հիմքում: Ծրագրով 2010թ երրորդ եռամսյակում նախատեսված առաջին մասնաբաժնի (4 միլիոն ԵՎՐՈ) հատկացման ժամանակ ընդհանուր բյուջեի 5%-ը (մոտ 200.000 եվրո) տրամադրելիս հիմք է ընդունվել «Ակադեմիայի մասին օրենքը», որը ստուգող առաքելության ժամանակ ներկայացված է եղել ԱԺ:

2007 թվականի մարտի 9-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ֆինանսավորման համաձայնագրով (Դատախարավական բարեփոխումների երկրորդ ծրագիր) նախատեսված բարեփոխումների ծրագրի 6 բաղադրիչներից մեկը դատավորների և դատախազների համատեղ ուսուցման կազմակերպման նպատակով մեկ հաստատության կառուցումն է, որը Բանկի կողմից ևս դիտարկվել է ծախսերի խնայողության, ինչպես նաև կրթության արդյունավետության տեսանկյունից արդարացված: Արդյունքում, Դատախարավական բարեփոխումների երկրորդ

ծրագրի շրջանակներում կազմված շենքային համալիրի կառուցման տեխնիկական առաջադրանքը նախատեսվել է որպես ՀՀ արդարադատության դպրոցի շենքային համալիրի կառուցում և դատավորների և դատախազների համար: Վերը նշված նպատակներից ելնելով, Երևանի քաղաքապետի 2007թ. օգոստոսի 27-ի թիվ 3097-Ա որոշմամբ հատկացվել է Երևան քաղաքի Փիրումյան փողոցին հարող տարածքում գտնվող 2500.0 քմ մակերեսով հողամաս: Շենքի կառուցման արժեքը կազմել է 844,681,213 ՀՀ դրամ: Շենքի կառուցման աշխատանքները արդեն վերջերս ավարտվել են և առաջիկայում ստորագրվելու է հանձնման-ընդունման ակտը: Բացի այդ գնվել են մոտ 450.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի գույք, կահավորանք, սարքավորումներ:

Ղատական կամ դատախազական համակարգերի կրթական ծրագրերի հաստատման, ակադեմիայում ունկնդիր դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում գտվող անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում ապահովված է Ղատավորների կարգավիճակի մասին Եվրոպական Խարտիայի պահանջը և նշված հարցերով որոշումները ընդունվում են համապատասխանաբար Խորհրդի դատավոր կամ դատախազ անդամների և Արդարադատության նախարարի կողմից նշանակված անդամի մասնակցությամբ՝ առնվազն 3 ձայնով: Ավելին, ունկնդրին Ակադեմիայից հեռացնելու և դրա արդյունքում դատավորների թեկնածությունների ցուցակից հանելու վերաբերյալ վերջնական որոշման իրավունքը Ակադեմիայի Խորհրդի միջնորդության հիման վրա վերապահված է Արդարադատության Խորհրդին, իսկ դատախազների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց մասով՝ ՀՀ զլխավոր դատախազին:

Ակադեմիայի կառավարմանը և կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող մյուս բոլոր հարցերով Խորհուրդը որոշումներն ընդունում է ամբողջ կազմով, այսինքն՝ և դատավոր, և դատախազ և գործադիրի ներկայացուցիչ անդամների մասնակցությամբ՝ նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Ղրանով իսկ միասնականացվում է Ակադեմիայի դերը՝ որպես կրթական գործընթացի կազմակերպման պատասխանատու:

Ակադեմիայի կառավարման հարցում ներդրվել է Ակադեմիայի կառավարման Խորհրդի և ղեկավար մարմնի Ռեկտորի միջև ստուգումների ու հակակշիռների յուրօրինակ մեխանիզմ: Ռեկտորին նշանակում է Խորհուրդը, իսկ վերջինիս կոմիտեից սահմանված ժամկետում նշանակում չկատարելու դեպքում՝ Վարչապետը՝ Խորհրդի առաջարկած անձանցից: Ռեկտորի գործողությունները գտնվում է Ակադեմիայի Խորհրդի վերահսկողության ներքո, Խորհուրդը իրավունք ունի միջնորդել ՀՀ վարչապետին Ռեկտորի լիազարությունները դադարեցնելու վերաբերյալ: Ավելին, Նախագծով Խորհրդին վերապահված է Ռեկտորի կողմից ներկայացված կրթական ծրագրերը իր համար նախընտրելի տարբերակով ընդունելու հնարավորություն: Ղա նշանակում է, որ անգամ կրթական ծրագրերի կազմակերպման հարցում ապահովված են անկախության երաշխիքներ, եթե կոլեգիալ կառավարման մարմինը գործում է կազմակերպված և փոխհամաձայնեցված:

Արդարադատության նախարարության ներկայացուցչի մասնակցությունը Ակադեմիայի կոլեգիալ կառավարման մարմնում, հանարավորություն է տալիս ՀՀ կառավարությանը առավել արդյունավետ իրականացնելու ոլորտում պետական քաղաքականության մաշկման իր առաքելությունը, այդ հարցում դասեր հարցում գործնականում ի հայտ եկող խնդիրներից, հակակշռի դերակատարում ունենալու դատական իշխանության բնագավառում կորպորատիվիզմի ձևավորմանը, խորհելու Ակադեմիայի գործառնությանը աջակցելու հարցում արտաքին նյութական և տեխանիկական աջակցության ներգրավման ուղիների վերաբերյալ:

Ավելին, գործադիր իշխանության ներկայացուցչի մասնակցության շնորհիվ, այն ստեղծում է Ակադեմիայի կոլեգիալ կառավարման մարմնի կայացման և գործունակության լուրջ խթան, ինչը նպաստելու է կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման հարցերում դատախազության ու դատական մարմինների փոխհամաձայնեցված, արդյունավետ քաղաքականության գործունեությանը: Հակառակ պարագայում բացառված չեն երկու համարգերի միջև լուրջ անհամաձայնությունները, որոնք ի վերջո Ակադեմիայի կառավարումը կարող են հանգեցնելու փակուղու և հարցականի տակ դնելու համատեղ ուսուցման արդյունավետությունը:

3. Ակնկալվող արդյունքը

«Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա ընդունմամբ պայմանավորած մի շարք այլ իրավական ակտերում՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք, «Դատախազության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Զինապարտության մասին», «Դատական ծառայության մասին» օրենքներում, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում, քրեական օրենսգրքում փոփոխությունների և լրացումներ նախատեսող օրենքների ընդունմամբ, հնարավոր է դառնում ուսուցման ոլորտում առկա, Ակադեմիայի գործունեության հետ կապված հասարակական հարաբերությունների ողջ ծավալի համալիր, համակարգված կարգավորումը, դատական ու դատախազական համակարգերի կադրերի պատրաստման բնագավառում միասնական պետական քաղաքականության իրականացումը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
«Հ կառավարություն	<p>1. Առաջարկվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում ակադեմիայի ռեկտորին վերաբերող հոդվածում ռեկտորի թեկնածուի համար լրացնել մանկավարժական գործունեության փորձ ունենալու պահանջ:</p> <p>2. «ՀՀ Դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում լրացնել</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p>	<p>1.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p> <p>2. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>

	<p>դրույթներ, որոնց համաձայն՝ արտահերթ որակավորման ստուգում չի կարող անցկացվել, եթե մինչև հերթական որակավորման ստուգումը մնացել է 6 ամսից պակաս ժամանակ:</p>		
--	--	--	--